



35. ՄԱՐԴ ԻՐԱ ՅՈՐՂԱՆՆՈՒ ԳՅՈՐԱ ՊՏԻ ՈՏԸ ՄԵԿՆԻ

Մի թագավոր իրա երկրումը ինչքամ դերձիկ կար կանչիլ ա տալի, հրամայում, որ իրա հմար մի է՛նթավոր յորդան կարեն, որ բոյովը մին ըլնի՝ ո՛նչ երկեն, ո՛նչ կարճ: Համա ոչ մի դերձիկ չի կարում նրա հրամանը կատարի. քոմքի գլխներն էլ կտրիլ ա տալի:

Եղի վերջը մի դերձիկ ա գալի.— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— ես քու ուղած յորդանը կկարեմ, որ ոնչ երկեն ըլնի, ոնչ կարճ. թե կհրամայես՝ կարեմ:

— Լա՛վ, կարա՛,— ասում ա թագավորը,— համա որ մի պուճուր երկեն էլավ, յա՛՝ կարճ՝ իմաց կաց քեզ քյալլա կանեմ. տե՛ս, աղաքուց ասում եմ, հա՛:

— Ղա՛րուլ եմ, թագավորն ապրած կենա. թե շկարացի՛ գուխըս կտրիլ տու:

Էս մեր խելոք դերձիկն ա՛ էթում ա մի լավ յորդան կարում, զաստի էլ յորդանը մի պուճուր կարճ ա անում: Վեր ա ունում տանում թագավորի աղաքին վե դնում. փեշի տակին էլ թաքուն մի դամշի ա պահած ըլնում:

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա դերձիկը,— հրեսիկ քու ուղած յորդանը կարել եմ. տես հավան կկենա՞ս:

— Տենանք բոյովս մին ա, թե ավել-պակաս ա,— ասում ա թագավորը:

Քաղաւորը պառկում ա, յորդանը քաշում վրեն՝ ոնները բաց ա մնում: Դերձիկը էն սհաթը փեշի տակիցը հանում ա դամշին, մի լավ շեպում ոններին թե չէ՝ ալբիալը Քաղաւորը ոնները իրան ա քաշում, յորդանի տակովն անում:

— Քաղա՛ւորն ապրած կենա,— ասում ա դերձիկը,— յորդանու գյորա ոտդ մեկնա:

Քաղաւորը որ լսում ա դերձիկի էս խելոք շուղաբը, էլ ըսկի՛ ձեն, ծպտուն չի հանում. դեռ հլա մենծ փող էլ ա բաշխում նրան ու ընենց ճամփու դնում:

Շատ գրուստ ա ասած, որ՝ մարդ իրա յորդաննու գյորա պտի՛ օտը մեկնի:

